

Ս Պ Ի Տ Ա Կ Զ Գ Ե Ս Տ

(Միխայիլ)

I

Անճրգ, խայտառակ պատժի էր մատնուած
Հունգարցի կոմսը շղթան ձեռքերին.
Նա ուզեց օգնել խեղճճւկ, հալածուած
Իր հայրենիքին. հպարտ, վեհ ոգին
Սաստիկ յուզուում էր. Ստրուկ էր զգում
Ստրուկների մէջ, և մինչ անսահման
Ջարիքի ընդդէմ կռիւ էր մղում,
Թշնամին բռնեց և մատնեց մահուան:

Հաղիւ էր քսան նա գարուն տեսնում
Եւ արդէն պէտք է թողնէր այս աշխարհ,
Մահից բնաւին նա չէր վախենում,—
Դա սփոփանք է շատերի համար:
Բայց սոսկալի է պարանը վզին
Կախ ընկած ճօճուել հրապարակի մէջ...
Սոված և քաղցած կը գան խմբովին
Ու ագռաւները և կռիւ ու վէճ
Կըսկսեն իսկոյն անտէր, անտէրունչ
Նրա գլխի շուրջ. իսկ կոմսը՝ անձուկ
Խօնաւ բանտի մէջ անդորր, լուռ ու մունջ
Քնած է, ինչպէս մի անհոգ մանուկ:

Առաւօտեան վաղ, մօրը փարելով
Նա միմնջում էր. «Մայրիկ, փնտս բարեւ,

ես քո զաւակն եմ միակ, բայց շուտով
կը մարի պայծառ իմ մատաղ արև
Ու ես կ'անջատուեմ ընդմիշտ քեզանից:
Կը մեռնի անհետ ինձ հետ միատեղ
եւ իմ անարատ, անունը անբիծ:
Ա՛խ, խղճան, մայրիկ. ես արիւնահեղ
Կռուի դաշտի մէջ ահ չեմ իմացել,
ես չեմ սարսափել կրակի առջև.
Բայց վաղը՝ անարդ կախաղանի մօտ
ես պիտի դողամ, ինչպէս մի տերև:

— «Օ՛, մի սարսափիր, որդեակ հարազատ,—
Ասում է որդուն մայրը սիրտ տալով,—
ես արտասուելով կը դնամ պալատ,
եւ իմ աղերսով ու արցունքներով
ես դուրս կը շարժեմ արքայի սրտում...
եւ երբ քեզ տանեն առաւօտեան դէմ
Դէպի կախաղան, ես պատշգամբում՝
Պատժատեղին մօտ, կանգնած կը լինեմ:
Եթէ սև զգեստ ունենամ վրաս
իմացիր, որ քեզ սպառնում է մահ,
Ձէ՛ որ, զաւակս, դու պիտի դնաս
Ընդդէմ քո բախտի քայլերով վստահ...
Հ՛օ հունդարացու արիւն կայ քո մէջ.
Բայց թէ ինձ տեսնես սպիտակ շորով—
իմացիր, մատաղ քո կեանքի համար
Դուրս եմ աղերսել իմ արցունքներով:
Թ՛ող լինես յանձնուած ժանտ դահիճներին,
Բայց դու չը դողաս, որդեակ իմ անգին:
եւ խօնաւ բանտում մինչև առաւօտ
Գնած է կոմսը հանգիստ, անխռով,
եւ երազի մէջ՝ պատշգամբի մօտ
Միշտ մօրն է տեսնում սպիտակ շորով:

II

Գուժկան զանգակի ձայնը հնչում է...
 Վազում են մարդիկ... Պահապաններով
 Զորս կողմը պատած կոմսը գնում է
 Դէպի հրապարակ հանդարտ քայլերով,
 Եւ քանի՜ աչքեր բաց պատուհանից
 Ճամբայ են գցում արտասուքով լի,
 Քանի՜ կանացի ընթոյշ ձեռքերից
 Ծաղկունք են թափւում վերջին բարևի
 Բայց կոմսը ոչինչ չէ էլ նկատում,
 Նայում է առաջ անթարթ աչքերով—
 Այնտեղ, ուր մայրն է կանգնած անտրտում՝
 Պատշգամբի վրայ սպիտակ շորով,
 Եւ կոմսի սիրտը բաբախեց ուժգին,
 Դէպի կախաղան նա գնաց առաջ
 Վստահ քայլերով... Զուարթ, խնդադին
 Մօտեցաւ դահճին համարձակ ու քաջ...
 Եւ մինչև անգամ պարանը վզին,
 Ժպիտն էր խաղում նրա երեսին:

Ինչո՞ւ էր մայրը սպիտակ հագած...
 Օ՛ր, սրբազան սուտ, այդպէս կարող էր
 Մոսկ մայրը խաբել, երկիւղով լցուած,
 Որ կախաղանից որդին չը վախէր:

Կ. ԿՐԱՍՆԻՆԻԿԵԱՆ